Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «11» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 Թ. N 280-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրության N 1 հավելվածի 11-րդ կետով, ելնելով վերոհիշյալ Կարգադրությամբ նախատեսված իրավաբանական կրթության բարեփոխման կառավարական ծրագիր մշակելու անհրաժեշտությունից, որը կարտացոլի իրավական համաուսուցման և կրթության նպատակների, խնդիրների, կազմակերպական ձևերի, բովանդակության և կառավարման հիմնահարցերի լուծմանն ուղղված խնդիրներն ու միջոցառումները, կրթության մեթոդաբանության և իրավագետ-մասնագետի պատրաստման մեթոդիկայի կատարելագործման ռազմավարությունը և հաշվի առնելով հանձնաժողովի կազմի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 01/08.1/11988-13 թվակիր գրությամբ ներկայացված առաջարկությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել համաուսուցման և իրավական դաստիրակության համակարգի բարեփոխումների հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ հանձնաժողովի գործունեության նպատակն է.

1) մշակել միջոցառումներ իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի առկայությունը ապահովելու համար, այդ թվում՝ բոլոր կրթական չափորոշիչները, հանրակրթական և հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը՝ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մակարդակներում վերանայելու համար.

2) բարձրացնել միջին և բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության որակը և իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես՝

ա/ մինչև 2014 թվականի փետրվար ամիսը մշակել իրավաբանական կրթության բարեփոխման կառավարական ծրագիր.

բ/ մինչև 2014 թվականի մարտ ամիսը նախատեսել արդարադատության ոլորտի միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկ և դրան համապատասխան մշակել կրթական ծրագրեր և չափորոշիչներ.

գ/ մինչև 2014 թվականի սեպտեմբեր ամիսը մշակել իրավական համաուսուցման և կրթության հարցերին վերաբերվող համապատասխան նորմատիվ իրավական ակտեր:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2013 թվականի նոյեմբերի 11-ի
N 280-Ա հրամանի

ԿԱԶՄ

Համաուսուցման և իրավական դաստիրակության համակարգի բարեփոխումների հանձնաժողովի

Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ	Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
	Հանձնաժողովի անդամներ՝
Ռուբեն ՄԵԼԻՔՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ
Ռոբերտ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ (համաձայնությամբ)
Լուսինե ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)
Սասուն ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի պետ (համաձայնությամբ)
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ	Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)
Արթուր ՎԱՂԱՐՇՅԱՆ	Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ամբիոնի վարիչ (համաձայնությամբ)

Ժոռա ՋՀԱՆԳԻՐՅԱՆ	«Գլաձոր» կառավարման համալսարանի ռեկտոր (համաձայնությամբ)
Մարիաննա ՔԱԼԱՇՅԱՆ	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)
Նորա ՍԱՐԳՍՅԱՆ	Հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդական: